ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՓԻՆԵ ՀՈՒՆԱՆԻ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՎՃԻՌՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿՈՎ)

ԺԲ.00.02 Հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2023

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

АРПИНЕ УНАНОВНА АРАКЕЛЯН

ОЦЕНКА ВЛИЯНИЯ ПОСТАНОВЛЕНИЙ ЕВРОПЕЙСКОГО СУДА ПО ПРАВАМ ЧЕЛОВЕКА (НА ПРИМЕРЕ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ)

АВТОРЕФЕРАТ

Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.02. – «Публичное право – конституционное, административное, финансовое, муниципальное, экологическое, европейское право, государственное управление»

ЕРЕВАН – 2023

Ատենախոսության թեման հաստատվել է
ՀՀ պետական կառավարման ակադեմիայում

Գիտական ղեկավար՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Ա. Հ. Խաչատրյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Վ. Վ. Ստեփանյան**
իրավաբանական գիտությունների թեկնածու **Վ. Վ. Ռաֆայելյան**

Առաջատար կազմակերպություն՝ **Արդարադատության ակադեմիա:**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2023թ. հուլիսի 6-ին ժ. 14^{30}-ին Երևանի պետական համալսարանում գործող ԲՈԿ-ի 001 իրավաբանական մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք. Երևան, Ալեք Մանուկյան, 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքվել է 2023թ. մայիսի 25-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական
քարտուղար, իրավ. գիտ. թեկ., ասիս. **Ժ. Ա. Ստեփանյան**

Тема диссертации утверждена в
в Академии государственного управления РА

Научный руководитель: доктор юридических наук, професор **А. Хачатрян**

Официальные оппоненты: доктор юридических наук, професор **В. В. Степанян**
кандидат юридических наук **В. В. Рафаелян**

Ведущая организация: **Академия Юстиции**

Защита состоится 6-го июля 2023г. в 14^{30} часов на заседании специализированного совета ВАК 001 по юриспруденции при Ереванском государственном университете (0025, г. Ереван, Алека Манукяна, 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки Ереванского государственного университета.

Автореферат разослан 25-го мая 2023г.

Ученый секретарь специализированного совета,
кандидат юридических наук, ассистент **Ж. А. Степанян**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Մարդու իրավունքների պաշտպանության միջազգային-իրավական կառուցակարգերի շարքում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան) ունի առանձնահատուկ դեր: Ասվածը հատկապես պայմանավորված է Եվրոպական դատարանի կողմից կայացվող դատական ակտերի ինքնատիպ իրավաբանական բնույթով: Եվրոպական դատարանի վճիռները կոնկրետ գանգատի հիման վրա գործը լուծող վերջնական դատական ակտ լինելուց բացի Կոնվենցիայի պաշտոնական մեկնաբանություններն են և իրենց գիտագործնական ու գիտատեսական նշանակությամբ էապես ազդում են իրավունքի զարգացման վրա, ինչում էլ դրսևորվում է Եվրոպական դատարանի վճիռների res interpretata բնույթը: Եվրոպական դատարանի վճռի՝ որպես իրավունքի զարգացման միջոցի իրավաբանական արժեքը լավագույնս բացահայտվում է իրավունքների պաշտպանության կոնվենցիոն համակարգի համատեքստում Եվրոպական դատարանի զարգացող իրավաբանության ամբողջականության մեջ վերջինս դիտարկելիս:

ՀՀ-ն, 20 տարի առաջ՝ 2002 թվականի ապրիլի 26-ին, վավերացնելով Կոնվենցիան, ստանձնել է ՀՀ ներպետական օրենսդրությունը կոնվենցիայով երաշխավորվող իրավունքների բովանդակային ծավալին և իրավունքների պաշտպանության կոնվենցիոն չափորոշիչներին համապատասխանեցնելու պարտավորությունը: Սույն աշխատության շրջանակներում, ի թիվս այլնի, ուսումնասիրվել են Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում Եվրոպական դատարանի վճիռների իրավական արժեքն ու նշանակությունը:

Հետազոտության թեմայի արդիականությունը պայմանավորված է մի շարք հանգամանքներով: Այսպես, Եվրոպական դատարանի վճիռների ազդեցությունը, հաճախ դուրս գալով տվյալ գործով պատասխանող պետության շրջանակներից, տարածվում է նաև այլ պետությունների իրավական համակարգերի վրա: Սրանով պայմանավորված՝ անհրաժեշտություն է առաջանում գնահատել յուրաքանչյուր դեպքում Եվրոպական դատարանի վճիռների ազդեցության և դրանով պայմանավորված պարտավորությունների ծավալը: Ներկայիս իրավունքի գլոբալիզացման պայմաններում Եվրոպական դատարանի վճիռների ազդեցության պատշաճ գնահատումը կարևորվում է ոչ միայն Կոնվենցիայի վավերացմամբ ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարումն ապահովելու առնչությամբ, այլ նաև Եվրոպական դատարանի իրավաբանության

միջոցով իրավունքի զարգացման հեռանկարների կանխորոշման և ներպետական իրավական համակարգերը դրան նախապատրաստելու անհրաժեշտությամբ պայմանավորված:

Թեմայի արդիականությունը կարևորվում է նաև այն հանգամանքով, որ Եվրոպական դատարանն ինքն էլ 2021 թվականից ի վեր, փոխելով իր կողմից գործերի քննության առաջնահերթության քաղաքականությունը, հատուկ կարևորությամբ ընդգծել է «ազդեցություն ունեցող գործեր» (impact cases) կատեգորիայի ներքո ընդգրկվող գործերի քննության հատուկ ընթացակարգի սահմանման անհրաժեշտությունը: Դատարանի քննությանը հանձնված գործը որակվում է որպես «ազդեցություն ունեցող գործ», եթե այն մարդու իրավունքների պաշտպանության համակարգի զարգացման համար կարող է ունենալ առանձնահատուկ նշանակություն կամ եթե նրանում արծարծվում են Կոնվենցիայի մեկնաբանման և կիրառման հետ կապված հարցեր նորովի մոտեցմամբ: Թե ինչպիսին կլինի Եվրոպական դատարանի կողմից ներդրված նոր կատեգորիայի ներքո քննվող գործերով արտահայտված իրավական դիրքորոշումների իրավաբանական արժեքը Եվրոպայի խորհրդի անդամ բոլոր պետությունների համար՝ դեռ հայտնի չէ: Այնուամենայնիվ, մինչև նշված կատեգորիայի ամբողջական ներդնումն անհրաժեշտ է համալիր պատկերացում ձևավորել առհասարակ Եվրոպական դատարանի վճիռների ազդեցության ու ազդեցության ձևերի վերաբերյալ, ինչը հետագայում կնպաստի նոր կատեգորիայի ներքո քննված գործերով կայացված վճիռների ազդեցության սահմանների ճիշտ տարորոշմանը: Վերոշարադրյալով պայմանավորված անհրաժեշտություն է առաջացել ուսումնասիրել Եվրոպական դատարանի վճիռների իրավաբանական բնույթը, բացահայտել Եվրոպական դատարանի վճիռների ազդեցության գնահատման համակարգն ու մեթոդները, վեր հանել վճիռների ազդեցության ձևերը ու դրանց դրսևորման տարբերակները և գնահատել Եվրոպական դատարանի վճիռների ազդեցությունը Հայաստանի Հանրապետության օրինակով:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսության հիմնական նպատակը Եվրոպական դատարանի վճիռների յուրահատուկ իրավաբանական բնույթով պայմանավորված վերջիններիս ազդեցության տեսագործնական հիմնախնդիրների գիտական ուսումնասիրության արդյունքում Եվրոպական դատարանի վճիռների ազդեցության ձևերի բացահայտումն է, ՀՀ-ում իրականացվող իրավաստեղծ և իրավակիրառ գործունեության նկատմամբ Եվրոպական դատարանի վճիռների ազդեցության ուղղությունների վերհանումն ու առկա գործիքակազմերի կատարելագործմանն ուղղված առաջարկությունների ներկայացումը: Ատենա-

խոսության շրջանակներում առաջադրվել են հետևյալ խնդիրները՝

- պարզել Եվրոպական դատարանի վճիռների իրավաբանական բնույթը և դրանով պայմանավորված տարանջատել Եվրոպական դատարանի վճիռների ազդեցության ձևերը,
- բացահայտել Եվրոպական դատարանի դատազորության շրջանակներում մարդու իրավունքների պաշտպանության նվազագույն չափորոշիչների սահմանման առանձնահատկությունները,
- ուսումնասիրել Եվրոպական դատարանի վճիռների ազդեցության գնահատման համակարգի տարրերը, մեթոդներն ու սկզբունքները,
- վեր հանել Եվրոպական դատարանի վճիռների ազդեցության ձևերից յուրաքանչյուրի առանձնահատուկ բովանդակային ծավալը,
- դիտարկել Եվրոպական դատարանի վճիռները erga omnes և res interpretata հայեցակարգերի լույսի ներքո և գնահատել Եվրոպական դատարանի վճիռների պարտադիրության ուժը,
- դիտարկել Եվրոպական դատարանի վճիռները միջազգային սահմանադրական արդատադատության համատեքստում և բացահայտել Եվրոպական դատարանի վճիռների արժեքը միջազգային սահմանադրական իրավունքի աղբյուրների համակարգում,
- ՀՀ իրավաստեղծ և իրավակիրառ գործունեության ոլորտների օրինակով գնահատել Եվրոպական դատարանի վճիռների ազդեցությունը,
- վեր հանել Եվրոպական դատարանի վճիռների ազդեցությունը ՀՀ սահմանադրությամբ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության սահմանադրահիրավական երաշխիքների ամրապնդման համատեքստում:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտն են Կոնվենցիայի վավերացմամբ ստանձնած պարտավորությունների կատարման, այդ թվում՝ Եվրոպական դատարանի վճիռների իմպլեմենտացիայի ապահովման համատեքստում Եվրոպական դատարանի վճիռների ազդեցության առնչությամբ ծագող փոխհարաբերությունները: Հետազոտության առարկան են Եվրոպական դատարանի վճիռների ազդեցության գնահատման համակարգի ու մեթոդների, Եվրոպական դատարանի վճիռների՝ միջազգային սահմանադրական արդարադատության հետ ունեցած հարաբերակցության, Եվրոպական դատարանի վճիռների ազդեցության ձևերի և ՀՀ-ի օրինակով Եվրոպական դատարանի վճիռների ազդեցության ձևերի բովանդակության բացահայտման առնչությամբ առանձնացված հիմնախնդիրները:

Հետազոտության թեմայի գիտական մշակվածության աստիճանը: Սույն աշխատանքն իր բովանդակային առումով առաջինն է հայկական

իրավագիտական գրականության մեջ, որում հետազոտության են ենթարկվել Եվրոպական դատարանի վճիռների ազդեցության գնահատման համակարգը, վճիռների ազդեցության ձևերն ու դրանցից յուրաքանչյուրի բովանդակությունը: Կոնվենցիայի վավերացումից ի վեր նման թեմատիկ ուղղվածությամբ գիտական հետազոտություն չի իրականացվել, թեև հետազոտության թեմային առնչվող առանձին հարցերի կապակցությամբ համապարփակ ուսումնասիրություններ հանդիպում են հատկապես Լ. Հակոբյանի, Գ. Կոստանյանի, Գ. Խաչատրյանի թեկնածուական ատենախոսությունների շրջանակներում: Առավել հարուստ գիտական ուսումնասիրություններ և հետազոտություններ կատարվել են ռոմանագերմանական և անգլոամերիկյան իրավական համակարգը ներկայացնող առաջադեմ եվրոպական երկրների տեսաբանների կողմից, ինչպիսիք են P. Leach-ը, J. Gerards-ը, G.J.H. van Hoof-ը և P. Van. Dijk-ը: Սույն հետազոտության թեմային առնչվող որոշ հարցադրումների կապակցությամբ հետազոտություններ հեղինակել են ռուս տեսաբաններ Մ. Тропер-ը, С. А Глотов-ը, Д. Ю. Матвеев-ը և այլք:

Հետազոտության տեսական և նորմատիվ հիմքերը: Հետազոտության համար որպես տեսական հիմք ծառայել են Եվրոպական դատարանի դատազորության վերաբերյալ տեսական և գործնական ուսումնասիրությունները, Եվրոպական դատարանի վճիռների իմպլեմենտացիայի և ոլորտային ազդեցությունների վերլուծությանը նվիրված, ինչպես նաև մարդու իրավունքների պաշտպանության կոնվենցիոն համակագի ուսումնասիրությանը նվիրված գիտական հետազոտությունների արդյունքները: Մասնավորապես, ատենախոսության համար տեսական հենք են հանդիսացել իրավաբան-գիտնականների ու տեսաբանների աշխատությունները: Հետազոտության համար որպես իրավական հիմք են ծառայել միջազգային և ներպետական իրավական ակտերը, միջազգային կազմակերպությունների մարմինների կողմից կայացված ակտերը, միջազգային դատական մարմինների, ինչպես նաև ազգային դատարանների կողմից կայացված դատական ակտերը: Մասնավորապես, սույն աշխատանքի շրջանակներում կատարված հետազոտությունների իրականացման համար որպես իրավական և փորձառնական հիմք են օգտագործվել Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիան, Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի հանձնարարականները, Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի բանաձևերը, Եվրոպական դատարանի և Միավորված ազգերի կազմակերպության Արդարադատության դատարանի իրավական դիրքորոշումները, Հայաստանի Հանրապետության Սահմա-

նադրությունը, դատավարական օրենսգրքերը, որոշ ոլորտային օրենքներ, ինչպես օրինակ՝ «ՀՀ Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքը, ՀՀ բարձրագույն դատական ատյանների իրավական դիրքորոշումները, տարբեր եվրոպական երկրների սահմանադրություններն ու առանձին օրենքները և այլն:

Հետազոտության ընդհանուր մեթոդաբանությունը: Հետազոտության շրջանակներում օգտագործվել են ինչպես ընդհանուր գիտական, այնպես էլ իրավագիտությանը հատուկ մեթոդներ: Ընդհանուր գիտական մեթոդներից կիրառվել են պատմական և տրամաբանական մեթոդները, ինչպես նաև համագիտական այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են անալիզը, սինթեզը, դեդուկցիան և ինդուկցիան: Որպես հատուկ մեթոդներ կիրառվել են իրավահամեմատական, համակարգային-կառուցվածքային, ձևական-իրավաբանական, համակարգային վերլուծության մեթոդները:

Ատենախոսության գիտական նորույթը: Աշխատանքի գիտական նորույթը կայանում է նրանում, որ հայկական իրավագիտության մեջ համակարգված կերպով ուսումնասիրության են ենթարկվել Եվրոպական դատարանի վճիռների իրավաբանական բնույթը, դրանով պայմանավորված վճիռների ազդեցությունն ու ազդեցության ձևերը: Այս ամենը զուգորդվել է խնդրո առարկա հարցերի առնչությամբ Եվրոպական դատարանի զարգացող իրավական դիրքորոշումների վերլուծությամբ: Արդյունքում վերհանվել են Եվրոպական դատարանի վճիռների ազդեցության վերաբերյալ տեսական հիմնադրույթներ, կատարվել եզրահանգումներ:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:

1. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ի համեմատություն մարդու իրավունքների պաշտպանության միջազգային-իրավական այլ կառուցակարգերի՝ մարդու իրավունքների պաշտպանության եվրոպական համակարգի առանձնահատկություններից է ոչ միայն Եվրոպական դատարանի վճիռների յուրահատուկ իրավաբանական բնույթը, այլ նաև այն իրավաբանական հետևանքները, որ վերջիններս առաջացնում են, ատենախոսությունը հիմնված է այն գաղափարի վրա, որ Եվրոպական դատարանի վճիռների ազդեցության գնահատման համակարգի հիմքում ընկած սկզբունքների և ազդեցության գնահատման մեթոդների ընտրությունը պետք է պայմանավորված լինի վերոշարադրյալ առանձնահատկություններով:

Հիշյալ նկատառումով պայմանավորված՝ կարևորելով Եվրոպական դատարանի վճիռների յուրահատուկ իրավաբանական բնույթն ու նշանակությունն առ այն, որ վերջիններս՝ ա) դիտարկվում են որպես

Կոնվենցիայի պաշտոնական մեկնաբանություն, բ) ունեն գիտագործնական և գիտատեսական նշանակություն, գ) բնութագրվում են հարաբերական կայունությամբ և անմիջական կիրառությամբ, և դ) պարտադիր են կատարման համար, ատենախոսությամբ հիմնավորվել է, որ այդ վճիռների ազդեցության գնահատումը հիմնվում է բազմակողմանիության, համալիրության և օբյեկտիվության սկզբունքների վրա, իսկ որպես ազդեցության գնահատման մեթոդներ օգտագործվում են ինչպես ընդհանուր համագիտական մեթոդները (անալիզ, սինթեզ, ինդուկցիա, դեդուկցիա) այնպես էլ իրավահամեմատական, ձևական-իրավաբանական, համակարգային վերլուծության հատուկ գիտական մեթոդները:

Միաժամանակ, ատենախոսությամբ հիմնավորվել է այն դիրքորոշումը, ըստ որի՝ Եվրոպական դատարանի վճիռների ազդեցությունը լավագույնս կարող է գնահատվել ex post կամ հետահայաց գնահատման տեսությանը համահունչ, որի գործնական դրսևորումները վերլուծվել են Հայաստանի Հանրապետության վերաբերյալ հրապարակված Եվրոպական դատարանի վճիռների հիման վրա օրենսդրության փոփոխության օրինակներով:

2. Ուսումնասիրելով մարդու իրավունքների պաշտպանության նվազագույն չափորոշիչների ձևավորման աղբյուրի վերաբերյալ տեսական մոտեցումները, բացահայտելով իրավական չափորոշիչների համար խիստ բնութագրական հատկանիշների՝ տիպականության և ուղենիշային բնույթի բովանդակությունը՝ ատենախոսությամբ հիմնավորվել է այն գաղափարը, որ Եվրոպական դատարանի վճիռներն ազդում են մարդու իրավունքների պաշտպանության իրավական չափորոշիչների համակարգի ձևավորման վրա հետևյալ հիմնավորումներով՝

ա) Կոնվենցիան գործում է այնպես, ինչպես մեկնաբանված է Եվրոպական դատարանի վճիռներում, հետևաբար, եթե կոնվենցիոն դրույթը ինքնին մարդու իրավունքների պաշտպանության իրավական չափորոշիչ է, ապա Եվրոպական դատարանի վճռում այդ դրույթի բովանդակությունը բացահայտող իրավական դիրքորոշումները ևս կարող են դիտարկվել որպես ինքնուրույն իրավական չափորոշիչներ,

բ) Եվրոպական դատարանի վճիռներին վերագրելի են իրավական չափորոշիչներին բնորոշ հատկանիշները, ավելին, ինչ վերաբերում է ուղենիշային բնույթին, Եվրոպական դատարանի վճիռներն ուղղորդող նշանակություն և բնույթ ունեն ոչ միայն ներպետական դատարանների ու իրավասու մարմինների համար, այլ նաև հենց իր՝ Եվրոպական դատարանի համար, ինչն էլ կանխորոշում է Եվրոպական դատարանի վճռների հարաբերական կայուն բնույթը:

3. Վերլուծելով կոնկրետ գործով կողմ չհանդիսացող երրորդ

պետության համար Եվրոպական դատարանի վճիռներում արտահայտված իրավական դիրքորոշումների պարտադիրության հարցը, ուսումնասիրելով միջազգային դատական ատյանների իրավական դիրքորոշումների պարտադիրության ուժի վերաբերյալ տեսության մեջ հանդիպող erga omnes ազդեցության և res interpretata սկզբունքի հայեցակարգերը, ինչպես նաև համադրելով տեսական եզրահանգումները Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների ու ներպետական իրավական համակարգի կարգավորումների հետ, ատենախոսությամբ հիմնավոր է համարվել հետևյալ դիրքորոշումը, որ Եվրոպական դատարանի վճիռներին բնորոշ է res interpretata բնույթը, և այդ վճիռները գործով կողմ չհանդիսացող պետության համար ունեն մեկնաբանական, ուղղորդիչ նշանակություն և պարտադիր չեն, ի տարբերություն կոնկրետ պետության վերաբերյալ կայացված վճիռների:

4. Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ յուրաքանչյուր պետության իրավական համակարգի առանձնահատկություններով, ինչպես նաև Եվրոպական դատարանի վճռի պարտադիրության ուժի տարբեր ընկալումներով պայմանավորված յուրաքանչյուր կոնկրետ գործով Եվրոպական դատարանի վճիռները կարող են ունենալ ազդեցության տարբեր դրսևորումներ ու ձևեր, ատենախոսությամբ հիմնավորվել է այն գաղափարը, որ Եվրոպական դատարանի վճիռները՝

ա) ըստ հասցեական ազդեցության կարող են ունենալ ուղղակի և անուղղակի դրսևորումներ,

բ) ըստ ներգրավված պետական մարմինների գործունեության ոլորտի՝ կարող են ազդել իրավաստեղծ կամ իրավակիրառ մարմինների գործունեության վրա,

գ) ենթադրվող լրացուցիչ արդյունքի ազդեցությամբ պայմանավորված կարող են ունենալ ակադեմիական և իրազեկող դրսևորումներ:

5. Կարևորելով եվրոպական երկրների սահմանադրական կարգի հիմունքների վերլուծության արդյունքները և Եվրոպական դատարանի դատական պրակտիկայում «Կոնվենցիայի՝ որպես եվրոպական հասարակական կարգն ապահովող սահմանադրական գործիքի» նշանակությունը, ատենախոսությամբ հիմնավորվել է այն դիրքորոշումը, որ համաեվրոպական սահմանադրական կարգի հաստատման ու եվրոպական իրավունքի սահմանադրականացման ու արդիականացման գործընթացների առանցքում դիտարկվում է Եվրոպական դատարանը: Վերջինս օժտված է բոլոր անհրաժեշտ գործառույթներով և ունի բավականաչափ հստակ գործիքակազմ ինչպես կոնվենցիոն համակարգի էվոլյուցիոն զարգացման գործում իր առաջնային դերն ու ազդեցությունն ունենալու,

եվրոպական իրավական համակարգի սահմանադրականացումն ու արդիականացումն ապահովելու այնպես էլ Կոնվենցիայի՝ որպես «համաեվրոպական սահմանադրության» միատեսակ մեկնաբանմամբ ու կիրառությամբ պայմանավորված և նույն Կոնվենցիայով երաշխավորված հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության միասնական կառուցակարգերի ձևավորմանը նպաստելու համար:

6. Հաշվի առնելով ազգային խորհրդարանների ընդգծված կարևորագույն դերակատարումն իրավաստեղծ գործունեության իրականացման շրջանակներում ներպետական օրենսդրության ու Եվրոպական դատարանի վճիռներում մեկնաբանվող կոնվենեցիոն չափանիշների համապատասխանության ապահովման համատեքստում, և հիմք ընդունելով Ազգային ժողովի սահմանադրական լիազորությունների և գործունեության համակարգային վերլուծության արդյունքները՝ ատենախոսությամբ հիմնավորվել են հետևյալ մոտեցումները, որ Հայաստանի Հանրապետությունում իրավաստեղծ գործունեության ոլորտում Եվրոպական դատարանի վճիռների ազդեցությունը պետք է դիտարկվի և համապատասխանաբար գնահատվի հետևյալ բովանդակային ծանրաբեռնվածությամբ՝

ա) խորհրդարանական վերահսկողություն՝ մարդու իրավունքների պաշտպանության ոլորտի օրենքների նախագծերի և մարդու իրավունքների պաշտպանության կոնվենցիոն չափանիշների ներդաշնակության և համապատասխանության ստուգման և ապահովման առնչությամբ,

բ) խորհրդարանական մշտադիտարկում՝ Եվրոպական դատարանի վճիռների կատարման շրջանակներում ձեռնարկվող ընդհանուր միջոցառումների առնչությամբ:

Վերոշարադրյալի համատեքստը վերլուծելուց բացի ատենա-խոսությամբ նաև առաջարկվել են մարդու իրավունքների պաշտպանության կոնվենցիոն չափանիշներին օրենքների նախագծերի և գործող օրենքների համապատասխանության ստուգման գործիքակազմի կատարելագործման ուղիները՝ մշտական հանձնաժողովների գործունեության ոլորտների ընդլայնման, խորհրդարանական մշտադիտարկման լրացուցիչ գործիքների նախատեսման եղանակներով:

7. Արձանագրելով Սահմանադրության դերը մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության սահմանադրաիրավական երաշխիքների ամրապնդման գործում՝ ատենախոսությամբ հիմնավորվել է այն դիրքորոշումը, որ սահմանադրական ժամանակակից կարգավորումների շրջանակում կարևորվել է Եվրոպական դատարանի վճիռների իրավամեկնաբանողական և արժեբանական նշանակությունը,

այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունում Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների իմպլեմենտացիան ապահովող լրացուցիչ և արդյունավետ միջոցների երաշխավորման համատեքստում առ այն, որ՝

ա) սահմանադրական կարգավորումների մակարդակով նախատեսվել է, որ հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների՝ այդ թվում նաև Եվրոպական դատարանի պրակտիկան (Սահմանադրություն, հոդվ. 81),

բ) գործնականում ստեղծվում է իրական հնարավորություն ապահովելու ներպետական ու եվրոպական մակարդակներում միևնույն իրավունքի բովանդակային ծանրաբեռնվածության միատեսակ ընկալում՝ այն կանխավարկածով, որ յուրաքանչյուր դեպքում իրավակիրառողի կողմից Սահմանադրությամբ ամրագրված դրույթներին տրված մեկնաբանությունը պետք է համահունչ լինի Կոնվենցիայով երաշխավորվող նույն իրավունքի բովանդակությանը:

Հետազոտության գիտատեսական ու գործնական նշանակությունը: Ատենախոսության շրջանակներում կատարված տեսական եզահանգումների, ինչպես նաև պաշտպանության ներկայացվող դրույթների համապարփակ վերլուծությունը հնարավորություն է տալիս ամբողջական պատկերացում կազմել Եվրոպական դատարանի վճիռների ազդեցության գնահատման համակարգի և մեթոդաբանության վերաբերյալ, որի կիրառությունը գործնականում՝ ինչպես ՀՀ-ի վերաբերյալ հրապարակված վճիռների, այնպես էլ այլ ԵԽ անդամ պետությունների վերաբերյալ կայացված վճիռների ազդեցության գնահատման շրջանակներում ապահովում է ատենախոսության գիտագործնական նշանակությունը:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը: Ատենախոսության թեմայի հետազոտության արդյունքները տեղ են գտել հեղինակի թվով 7 գիտական հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը: Թեկնածուական ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, որոնք ներառում են ինը ենթագլուխներ, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Ատենախոսության հիմնական բովանդակությունը

Ատենախոսության ներածության մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված են գիտական մշակվածության աստիճանը, հետազոտության օբյեկտը և առարկան, նպատակը,

խնդիրները, ատենախոսության մեթոդաբանական, տեսական, իրավական հիմքերը, գիտական նորույթն ու պաշտպանության ներկայացվող դրույթները, ատենախոսության տեսագործնական նշանակությունը, արդյունքների փորձարկումը և ատենախոսության կառուցվածքը:

«Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների ընդհանուր բնութագիրը» վերտառությամբ առաջին գլխում տեսական աղբյուրների ու Եվրոպական դատարանի վճիռների համակարգային վերլուծության արդյունքներում վեր են հանվել Եվրոպական դատարանի վճիռներ բնութագրիչ հատկանիշները, բացահայտվել է Եվրոպական դատարանի վճիռների իրավաբանական բնույթը: Եվրոպական դատարանի վճիռները դիտարկվել են որպես մարդու իրավունքների պաշտպանության իրավական չափորոշիչների ձևավորման աղբյուր, ասվածը հիմնավորվել է Կոնվենցիայի 13-րդ հոդվածի առնչությամբ Եվրոպական դատարանի կողմից զարգացրած իրավական դիրքորոշումների համակարգային ուսումնասիրության արդյունքներով:

«Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների ազդեցությունը և ազդեցության ձևերը» վերտառությամբ երկրորդ գլխի շրջանակներում ներկայացվել են Եվրոպական դատարանի վճիռների ազդեցության գնահատման համակարգն ու մեթոդները, ազդեցության գնահատման հիմքում ընկած սկզբունքները, Եվրոպական դատարանի վճիռների ազդեցության ձևերը մեր կողմից առաջ քաշված գնահատման չափանիշների լույսի ներքո: Մասնավորապես, բացահայտվել է Եվրոպական դատարանի վճիռների ուղղակի, անուղղակի, իրազեկող, ակադեմիական, ինչպես նաև իրավաստեղծ և իրավակիրառ մարմինների գործունեության նկատմամբ ունեցած ազդեցությունը: Նույն գլխի շրջանակներում Եվրոպական դատարանի վճիռները դիտարկվել են միջազգային սահմանադրական արդարադատության լույսի ներքո, քննարկվել է Եվրոպական դատարանի վճիռների դերը եվրոպական իրավական համակարգի սահմանադրականացումն ապահովելու գործում:

«Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների ազդեցությունը Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ երրորդ գլխի շրջանակներում գնահատվել է Եվրոպական դատարանի վճիռների ազդեցությունը ՀՀ-ում իրավաստեղծ գործունեության նկատմամբ: Առավել համապարփակ ուսումնասիրության է ենթարկվել խորհրդարանական վերահսկողության և խորհրդարանական մշտադիտարկման շրջանակներում ՀՀ Ազգային ժողովի իրավասության շրջանակը՝ դիտարկելով այն եվրոպական այլ երկրների պրակտիկայի համեմատությամբ: Ուսումնասիրվել է նաև Եվրոպական դատարանի վճիռների ազդեցությունը

դատարանների իրավակիրառ գործունեության նկատմամբ՝ Եվրոպական դատարանի վճիռները որպես դատական նախադեպ և որպես նոր հանգամանք դիտարկելով: Սույն գլխի շրջանակներում անդրադարձ է կատարվել նաև փոփոխված Սահմանադրությամբ մարդու իրավունքների պաշտպանության սահմանադրաիրավական երաշխիքների ամրապնդման գործում Եվրոպական դատարանի վճիռների ազդեցությանը:

Ատենախոսության եզրակացությունում առանձնացվել են հետևյալ եզրահանգումները՝

1. Եվրոպական դատարանի վճիռների առանձնահատուկ իրավաբանական բնույթը դրևսորվում է նրանում, որ այս վճիռները միայն կոնկրետ անհատական գանգատի շրջանակում բարձրացված իրավական վեճը լուծող դատական ակտեր չեն: Եվրոպական դատարանի վճիռների իրավաբանական ազդեցությունը սովորաբար դուրս է գալիս կոնկրետ գործի շրջանակներից ու ընդգրկում առավել լայն շրջանակներ՝ նպաստելով ԵԽ անդամ պետություններում (և ոչ միայն) Եվրոպական դատարանի վճիռներով սահմանվող իրավական չափորոշիչների իմպլեմենտացմանը: Նշվածից բխում է, որ Եվրոպական դատարանի վճիռների ազդեցության ձևերի տարանջատումն ու դրանցից յուրաքանչյուրին ինքնուրույն բովանդակության հաղորդումը պայմանավորված է Եվրոպական դատարանի վճիռների առանձնահատուկ իրավաբանական բնույթով: Եվրոպական դատարանի վճիռների յուրահատուկ իրավաբանական բնույթը մեր հեղինակային սահմանմամբ ամբողջացվում է հետևալ կերպ՝ Եվրոպական դատարանի վճիռները Կոնվենցիայի պաշտոնական մեկնաբանությունն են, որոնք ունեն գիտագործնական և գիտատեսական նշանակություն, բնութագրվում են հարաբերական կայունությամբ, անմիջական կիրառությամբ և պարտադիր են կատարման համար:

2. Եվրոպական դատարանը, լինելով Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների և ազատությունների պաշտպանության երաշխավորը ԵԽ անդամ պետություններում, իր վճիռներում Կոնվենցիայի դրույթները մեկնաբանելիս հաջողությամբ կիրառում է իրավական ակտի տեքստի և դրանում պարունակվող ձևակերպումների վրա հիմնված իրավական ակտերի դրույթերի մեկնաբանման (textualism) և խնդրո առարկա իրավական կարգավորումը նախատեսելիս հետապնդած նպատակի վերհանման վրա հիմնված իրավական ակտերի դրույթերի մեկնաբանման (intentionalism) մեթոդները: Ավելին, պրակտիկայի ուսումնասիրությունը թույլ է տալիս արձանագրել, որ իրավական ակտերի մեկնաբանման նշված մոտեցումներին զուգահեռ, Եվրոպական դատարանը սահմանել և կիրառում է Կոնվենցիայի մեկնաբանման իր ինքնուրույն մեթոդները, որոնք

են՝ Կոնվենցիայի դրույթների էվոլյուցիոն մեկնաբանումը, դրույթների մեկնաբանումը միասնական եվրոպական համաձայնության լույսի ներքո, Կոնվենցիայի մեկնաբանումն այնպես, որ կոնվենցիոն իրավունքները լինեն գործնականում կիրառելի, Կոնվենցիայի դրույթների մեկնաբանումը Կոնվենցիայի նախագծման նախապատրաստական փուլի փաստաթղթերում (travaux preparatoires) արված դիտարկումներին և հետապնդած նպատակներին համահունչ, Կոնվենցիայի մեկնաբանումը Եվրոպական դատարանի կողմից սահմանված հասկացությունների ինքնավար նշանակությանը համապատասխան:

3. Մեր բնութագրմամբ մարդու իրավունքների պաշտպանության իրավական ստանդարտները պետության կողմից մարդու իրավունքների պաշտպանության գործառույթի լիարժեք կենսագործման համար նախապայման հանդիսացող անհարժեշտ նվազագույն պահանջներն են, իսկ պետության միջազգային-իրավական պարտավորությունն է ապահովել այդ պահանջները և դրանց հիման վրա ձևավորած կառուցակարգերի ու գործիքակազմերի գործնական կիրառելիությունը: Մարդու իրավունքների պաշտպանության եվրոպական համակարգը, հիմնված լինելով իրավունքների պաշտպանության նվազագույն չափորոշիչների սահմանման հայեցակարգի վրա, չի բացառում, ավելին՝ ինքնին պայմանավորում է սահմանված չափորոշիչների բովանդակությունը մասնավորեցնող ու դրանց բովանդակությունը կազմող բաղկացուցիչ չափորոշիչների ձևավորումը գործնականում: Մեր գնահատմամբ՝ Եվրոպական դատարանն իր դատազորության ներքո գտնվող հարցերով կոնվենցիոն դրույթները մեկնաբանելիս բացահայտում է Կոնվենցիայում ամրագրված իրավական չափորոշիչների ծավալը՝ իրավակիրառ պրակտիկայում ձևավորելով նոր չափորոշիչներ հետևյալ հիմնավորումներով՝

- Կոնվենցիան այսօր գործում է այնպես, ինչպես մեկնաբանված է Եվրոպական դատարանի վճիռներում: Ասվածը հուշում է այն մասին, որ Եվրոպական դատարանի վճիռներն անմիջական օրգանական կապի մեջ են գտնվում Կոնվենցիայի բովանդակությունը կազմող համապատասխան դրույթների հետ: Հետևաբար, եթե կոնվենցիոն դրույթն ինքնին մարդու իրավունքների պաշտպանության իրավական ստանդարտ է, ապա այդ դրույթի բովանդակությունը բացահայտող եվրոպական դատարանի վճիռը այդ նույն իրավական ստանդարտի լրացուցիչ մեկնաբանությունն է, որը հարաբերակցում է խնդրո առարկա իրավական ստանդարտին այնպես, ինչպես մասը ամբողջին: Այլ կերպ ասած՝ եթե Կոնվենցիայի դրույթներն իրավական չափորոշիչներ են, ապա դրանց բովանդակությունը մասնավորեցնող ու հստակեցնող մեկնաբանություններն էլ իրավական

չափորոշչի բովանդակությունը կազմող բաղկացուցիչ տարրեր են: Ավելին, հաճախ Կոնվենցիայով երաշխավորվող իրավունքների բովանդակային ծավալն ամբողջությամբ արտահայտվում է միայն Եվրոպական դատարանի վճիռներում, և ստեղծվում է մի իրավիճակ, երբ Եվրոպական դատարանի վճիռներով ոչ միայն սահմանվում են Կոնվենցիայի տեքստում ուղղակիորեն չարտացոլված իրավունքներ և/ կամ պարտականություններ, այլ նաև բացահայտվում է դրանց էությունն ու բովանդակությունը:

- Մեր համոզմամբ իրավական ստանդարտներին բնութագրական հատկանիշներից երկուսն էլ՝ տիպականությունը և ուղենիշային բնույթը վերագրելի են Եվրոպական դատարանի վճիռներին: Ավելին, ուղենիշային բնույթի առնչությամբ հարկ է նշել, որ Եվրոպական դատարանի վճիռներն ուղղորդող նշանակություն և բնույթ ունեն ոչ միայն ներպետական դատարանների ու իրավասու մարմինների համար, այլ նաև հենց իր՝ Եվրոպական դատարանի համար, ինչն էլ պայմանավորում է Եվրոպական դատարանի վճռների հարաբերական կայուն բնույթը:

4. Եվրոպական դատարանի վճիռների ազդեցության գնահատումը՝ որպես ինքնուրույն գործընթաց էապես տարբերվում է ցանկացած այլ երևույթի կամ գործողության ազդեցության գնահատման գործընթացից: Ասվածը հատկապես պայմանավորված է այն հանգամանքով, որ ի տարբերություն առանձին վերցված որևէ գործողության կամ երևույթի, որոնց ազդեցությունը հնարավոր է տեսնել և գնահատել առանց լրացուցիչ միջնորդավորվածության, միանգամից՝ վերլուծելով գործողություն-ազդեցություն-արդյունք շղթան, Եվրոպական դատարանի վճիռների ազդեցության պատշաճ գնահատում հնարավոր է իրականացնել միայն այն պարագայում, երբ վճիռների ազդեցությունը դիտարկվի ներպետական իրավական համակարգի զարգացման, Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների իմպլեմենտացման առնչությամբ պետության իրավական քաղաքականության ու Կոնվենցիայի վավերացմամբ ստանձնած պարտավորության՝ այն է, Եվրոպական դատարանի վճիռների կատարման ապահովմանն ուղղված քայլերի համակցված արդյունքի վերհանման և գնահատման լույսի ներքո: Եվրոպական դատարանի վճիռների ազդեցության գնահատման հիմքում ընկած են օբյեկտիվության, բազմակողմանիության և համալիրության սկզբունքները: Եվրոպական դատարանի վճիռների ազդեցության գնահատման համար օգտագործվում են համեմատական-իրավական, իրավական մոդելավորման հատուկ մեթոդները և անալիզ, սինթեզ, դեդուկցիա և ինդուկցիա համագիտական մեթոդները:

5. Որպես կանոն Եվրոպական դատարանի վճիռների ազդեցության

գնահատումն իրականացվում է ex post կամ հետահայաց գնահատման տեսությանը համապատասխան, թեև տեսականորեն չեն բացառվում այնպիսի իրավիճակներ, երբ հնարավոր լինի իրականացնել Եվրոպական դատարանի վճիռների ազդեցության ex ante կամ հեռանկարային գնահատում: Այնուամենայնիվ, նման հնարավորություն կարող է առաջանալ միայն այն պարագայում,երբ Եվրոպական դատարանը վճռում ուղղակիորեն մատնանշում է պետության կողմից ձեռնարկվելիք ընդհանուր միջոցառումների շրջանակը՝ այսպիսով յուրաքանչյուր նման դեպքում վճռի ակնկալվող ազդեցությունը դարձնելով առավել կանխատեսելի և ինչ-որ տեղ նաև գնահատելի:

6. Եվրոպական դատարանի վճիռների ազդեցության դրսևորման ձևերի տարբերակման համար որպես հիմք են ընդունվում ազդեցության գնահատման հետևյալ չափանիշները և համապատասխանաբար ազդեցության դրսևորման ձևերը՝ Եվրոպական դատարանի վճիռների ազդեցությունն ըստ հասցեական ազդեցության (ուղղակի և անուղղակի), ըստ ներգրավված պետական մարմինների գործունեության ոլորտի (իրավաստեղծ և իրավակիրառ), ըստ ենթադրվող լրացուցիչ արդյունքի (ակադեմիական և իրազեկող):

7. Ըստ հասցեական ազդեցության՝ Եվրոպական դատարանի վճիռների տարբերակման հիմքում ընկած է այն հանգամանքը, թե Եվրոպական դատարանի վճռի պատճառաբանական մասում արված դիտարկումներն ու մեկնաբանությունները ինչպիսի ազդեցություն և պարտադիրության ուժ են ունենում պետության համար: Եթե խոսքը վերաբերում է տվյալ գործով կողմ հանդիսացող պետության վերաբերյալ կայացված վճռի հասցեական ազդեցությանը, ապա տվյալ պետության համար վճռի ազդեցությունն ուղղակի է: Եթե ասվածը դիտարկվում է գործով կողմ չհանդիսացող պետության առնչությամբ, ապա վերջինիս նկատմամբ Եվրոպական դատարանի վճռի ազդեցությունն անուղղակի է:

8. Կոնվենցիայի 46-րդ հոդվածից բխում է, որ Եվրոպական դատարանի վճիռներն օժտված են inter partes պարտադիրության ուժով (այն է՝ պարտադիր են միայն կողմ հանդիսացող պետության կամ պետությունների համար) և տեսության մեջ ընդունված մոտեցման համաձայն չունեն erga omnes ազդեցություն կոնկրետ գործով վարույթի կողմ չհանդիսացող մյուս պետությունների համար: Այնուամենայնիվ, նույնիսկ առանց Եվրոպական դատարանի վճիռների Erga omnes պարտադիրության ուժի հատուկ ամրագրման, գործնականում պետությունները, որպես կանոն, ընդունում և առաջնորդվում են Եվրոպական դատարանի վճիռներում տրվող Կոնվենցիոն դրույթների մեկնաբա-

նություններով՝ որպես խնդրո առարկա դրույթների կիրառման առնչությամբ ուղղարդիչ բնույթ ունեցող դիրքորոշումներ, ինչում էլ դրսևորվում է Եվրոպական դատարանի վճիռների անուղղակի ազդեցությունը:

9. Իրավական որոշակիությունից, կանխատեսելիության և իրավահավասարության սկզբունքներից է բխում, որ Կոնվենցիոն դրույթների միատեսակ մեկնաբանումն ու կիրառումը վերաբերում է ոչ միայն Եվրոպական դատարանին, այլ նաև կոնվենցիոն համակարգի և Եվրոպական դատարանի իրավազորության ներքո գտնվող պետություններին՝ որպես Եվրոպական դատարանի վճիռներում արտահայտված իրավական դիրքորոշումների անուղղակի ազդեցության կրողներ՝ անկախ այն հանգամանքից կոնկրետ գործով տվյալ պետությունը հանդես է եկել որպես գործի կողմ, թե ոչ: Այսպիսով, res interpretata հայեցակարգին համահունչ Եվրոպական դատարանի վճիռների իրավամեկնաբանողական բնույթը գործնականում պայմանավորում է գործով կողմ չհանդիսացող պետությունների համար Եվրոպական դատարանի վճիռների անուղղակի ազդեցությունը:

10. Բոլոր պետական մարմինների շարքում օրենսդիր մարմնի գործունեության նկատմամբ Եվրոպական դատարանի վճիռների առանձնահատուկ ազդեցությունն առավել ընդգծված է արտահայտվում: Այս մասին վկայում է նրանից ակնկալվող ակտիվ դերակատարությունը ի կատարումն Եվրոպական դատարանի վճիռների՝ օրենսդրության կատարելագործման, մարդու իրավունքների պաշտպանության եվրոպական չափանիշների ներդրման և ներպետական իրավական համակարգը իրավունքների պաշտպանության կոնվենցիոն երաշխիքներին ներդաշնակեցնելու գործում, ինչը, ի թիվս այլնի, ենթադրում է նաև իրավունքների պաշտպանության ներպետական միջոցների արդյունավետ իրականացման համար համապատասխան իրավական հիմքերի նախապատրաստում: Սրանում դրսևորվում է մարդու իրավունքների ոլորտում պետության եռատարր պարտավորության բովանդակությունը՝ այն է, հարգել, պաշտպանել և արդյունավետ կերպով երաշխավորել մարդու իրավունքները, որոնց համակցությունը լավագույնս դրսևորվում է պատշաճ օրենսդրական դաշտի ապահովմամբ:

11. ՀՀ Ազգային ժողովի գործիքակազմն ու լիազորությունները խորհրդարանական վերահսկողության և խորհրդարանական մշտադիտարկման իրականացման առնչությամբ թերի են: Մասնավորապես, ՀՀ Ազգային ժողովում գործող մշտական հանձնաժողովների գործունեության ոլորտների շարքում բացակայում է ուղղակի ամրագրումն առ այն, որ վերջիններից որևէ մեկը պատասխանատու է նաև խնդրո առարկա

ոլորտներում օրենքների նախագծերի ու մարդու իրավունքների պաշտպանության եվրոպական չափանիշների համապատասխանության ապահովման համար: Վերը նշվածի լույսի ներքո մարդու իրավունքների հանձնաժողովը Խորհրդարանական վեհաժողովի բանաձևի իմաստով չի համարվում խորհրդարանական վերահսկողության արդյունավետ գործիք:

12. Թեև խորհրդարանական վերահսկողության տեսանկյունից գոյություն ունեցող կառուցակարգերը դեռևս կատարելագործման կարիք ունեն, իսկ խորհրդարանական մշտադիտարկման կառուցակարգերը բոլորովին բացակայում են, այնուամենայնիվ անցած տարիների ընթացքում ՀՀ-ի վերաբերյալ հրապարակված վճիռների կատարման պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դա ամենևին չի խանգարել ՀՀ օրենսդրին իրականացնել Եվրոպական դատարանի կողմից ՀՀ վերաբերյալ կայացված վճիռներով արձանագրված խախտումների վերացման անհրաժեշտությամբ պայմանավորված օրենսդական բարեփոխումներ: Այլ է հարցը, որ առավել խորացված խորհրդարանական վերահսկողության և մշտադիտարկման գործիքակազմի մշակումը կարող է հնարավորություն ստեղծել ոչ միայն post factum արձագանքել արդեն իսկ Եվրոպական դատարանի կողմից արձանագրված խախտումներին, այլ նաև արդյունավետորեն կանխարգելել ապագայում Եվրոպական դատարանի կողմից այլ խախտումներ արձանագրող վճիռների կայացումը:

13. Մեր համոզմամբ ներպետական դատարանները Եվրոպական դատարանի վճիռներում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո օրենքների մեկնաբանումն ապահովելով կարող են գործնականում երաշխավորել ներպետական օրենսդրության կիրառության պատշաճ որակ: Այս պարագայում դատարանները ոչ միայն պետք է մեխանիկորեն կրկնեն կիրառելի նախադեպային իրավունքը, այլ գործադրեն պատշաճ ջանասիրություն՝ հետևելով Եվրոպական դատարանի կողմից կոնվենցիոն դրույթների մեկնաբանման էվոլյուցիոն մոտեցմանը և ներդաշնակեցնել այն խնդրո առարկա իրավիճակին:

14. Եթե ստորին ատյանների դատարանների պարագայում կախված իրավական համակարգի առանձնահատկություններից Կոնվենցիայի կիրարկման ու Եվրոպական դատարանի վճիռների անմիջական ազդեցության առնչությամբ դատարանների իրավասության շրջանակը տարբերվում է, նույնը չի կարելի ասել բարձրագույն դատական ատյանների մասին: Եվրոպական դատարանը պարտավորեցնում է ազգային բարձրագույն դատական ատյաններին հրաժարվել Կոնվենցիային հակասող ներպետական օրենսդրական դրույթները կիրառելուց և հորդորում է հաղորդել այդ դրույթներին Կոնվենցիային համահունչ իմաստ ու

բովանդակություն: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բարձրագույն դատական ատյանները, որպես կանոն, բացի վերանայվող վարույթներով գործի դատավարական և/կամ նյութահիրավական ճակատագիրը որոշող դատական ակտեր կայացնելուց, կոչված են նաև ապահովելու օրենքի միատեսակ կիրառություն՝ այս ատյանների նկատմամբ Եվրոպական դատարանի նման խիստ պահանջները լիովին արդարացվում են ներպետական իրավունքի կատարելագործման և համընդհանուր նվազագույն չափանիշների սահմանման անհրաժեշտությամբ պայմանավորված:

15. Եվրոպական դատարանի վճիռները չեն հանդիսանում դատարանի կողմից ստեղծված նախադեպային իրավունք, այլ հանդես են գալիս որպես մեկնաբանությունների նախադեպեր: «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով վերացվել է որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով Եվրոպական դատարանի դատական ակտի հիմնավորումների պարտադիրության հատկանիշը ներպետական դատարանների համար, ինչը մեր գնահատմամբ լիովին բխում է Եվրոպական դատարանի վճիռների ինցիտդենտային բնույթի բովանդակությունից: Խնդրահարույց են դատավարական օրենսգրքերի այն կարգավորումները, որոնք հնարավորություն են ընձեռում անձին պահանջել դատական ակտի վերանայում՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրի հիման վրա գործող միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտած այն վճիռը կամ որոշումը, որով թեև չի հիմնավորվել իր իրավունքի խախտման փաստը, այնուամենայնիվ, ինքը տվյալ վճռի կամ որոշման ուժի մեջ մտնելու պահին ունեցել է այդ իրավունքը միջազգային պայմանագրով նախատեսված պահանջներին (ժամկետներին) համապատասխան իրացնելու հնարավորություն: Այս իրավահարաբերությունների կարգավորմանը նվիրված դատավարական օրենսգրքերի բոլոր դրույթները իրավական որոշակիության տեսանկյունից թերի են, քանի որ հստակ պատասխան չեն նախատեսում հետևյալ հարցերի համար՝ ի՞նչ ծավալով և ապացուցման բեռի բաշխման ինչպիսի՞ կանոններով են վարույթի մասնակիցները հիմնավորելու կոնկրետ գործով փաստական հանգամանքների և որպես նոր հանգամանք վկայակոչվող Եվրոպական դատարանի վճռի փաստական հանգամանքների նմանությունը և տարբերությունը, ինչպե՞ս է անձը ապացուցելու խնդրո առարկա իրավունքը իրացնելու օբյեկտիվ հնարավորությունը, արդյո՞ք նման գործերով վարույթի նկատմամբ պետք է կիրառվեն Եվրոպական դատարանում գանգատի ընդունելիության փուլում կիրառման ենթակա կանոնները (victim status, significant disadvantage, etc.)

և այլն: Առաջարկվել է օրենսդրական հստակ կարգավորումներ նախատեսել նշված վարույթներով կիրառելի ընթացակարգային կանոնների առնչությամբ, որպեսզի հնարավորինս կանխատեսելի և արդյունավետ պաշտպանություն երաշխավորվի Եվրոպական դատարանի վճիռների՝ որպես նոր հանգամանքի հիմքով գործերի վերանայման վարույթների համար:

16. Եվրոպական դատարանի վճիռների իրազեկող ազդեցությունը տարածվում է ինչպես պետական ապարատի, այնպես էլ քաղաքացիական հասարակության նկատմամբ, ինչը հատկապես կարևորվում է Եվրոպական դատարանի վճիռների կատարման համատեքստում: Թեև Եվրոպական դատարանի վճիռների կատարման շրջանակներում ձեռնարկվող միջոցառումներն ամփոփող գործողությունների ծրագրերը և գործողությունների հաշվետվությունները մշակվում և Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտե են ներկայացվում կառավարության կողմից, սա ամենևին չի նշանակում, որ միայն վերջինս է կրում Եվրոպական դատարանի վճիռների կատարման պարտավորությունը: Եվրոպական դատարանի վճիռների կատարման գործընթացը Եվրոպական դատարանում քննված իրավական վեճով ներգրավված պետական մարմինների և քաղաքացիական հասարակության մասնակցությամբ Եվրոպական դատարանի արձանագրած խախտման աղբյուրի բացահայտմանն ուղղված և նման խախտումների կանխմանն ու վերացմանն ուղղված համակարգված քայլերի ամբողջությունն է: Ուստի, որքան լայնատարած է Եվրոպական դատարանի վճիռների իրազեկող ազդեցությունը, այնքան բարձր է կոնվենցիոն իրավունքի վերաբերյալ իրազեկվածության մակարդակը, հետևապես՝ նշված մարմինների միջև համագործակցության արդյունավետությունը:

17. Եվրոպական դատարանը դիտարկվում է համընդհանուր սահմանադրական կարգի հաստատման և եվրոպական իրավունքի սահմանադրականացման գործընթացի առանցքում: Եվրոպական իրավական համակարգի սահմանադրականացումը ոչ թե հանգում է որոշակի տարածաշրջանում ընդհանուր կիրառություն ու մեկնաբանություն ունեցող իրավական ակտի ճանաչմանն ու կիրառմանը, այլ այն սոցիալական համակարգի ձևավորմանը, որում իրացվում է եվրոպական իրավական համակարգի արժեքանությունը:

18. Ինչպես սահմանադրությունն առանց սահմանադրական դատարանի lex imperfecta ակտ է և միայն սահմանադրական դատարանի շնորհիվ է դառնում lex perfecta, այնպես էլ Կոնվենցիան Եվրոպական դատարանի ու դատարանի մեկնաբանությունների շնորհիվ է դառնում lex

perfecta: Մեր համոզմամբ, Եվրոպական դատարանը՝ որպես մարդու իրավունքների կոնվենցիոն համակարգի պաշտպանության միջոց իր գործառույթներով և որ ամենակարևորն է ներպետական իրավական համակարգում եվրոպական չափանիշների ներդրումն ապահովելու բացառիկ հնարավորությամբ գործում է որպես միջազգային սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմին: Ժամանակին զուգընթաց, պետությունների կողմից Եվրոպական դատարանի նկատմամբ վստահության ամրապնդման պայմաններում դատարանը միջազգային դատական ատյանից վերածվել է միջազգային սահմանադրական արդարադատության անդրազգային համակարգի՝ ուղղորդող նշանակություն ունենալով ներպետական իրավական համակարգերի զարգացման և իրավակիրառ պրակտիկայի բարեփոխման համար:

19. Թեև Սահմանադրական դատարանին վերապահված չէ հիմնական օրենքի պաշտոնական վերացական մեկնաբանման ինքնուրույն լիազորություն, սակայն իր լիազորությունների իրականացման ընթացքում վերջինս մեկնաբանում է ՀՀ սահմանադրությունը: Հենց այս հանգամանքով էլ պայմանավորված հիմնական իրավունքներն ու ազատությունները երաշխավորող դրույթները մեկնաբանելիս Սահմանադրական դատարանն օժտված է առանցքային դերակատարությամբ՝ խնդրո առարկա դրույթի կապակցությամբ տալու, ի թիվս այլնի, Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների լույսի ներքո մեկնաբանություն, որը հետագայում պարտադիր համարվելով ինչպես իրավաստեղծ, այնպես էլ իրավակիրառ մարմինների համար անշեղորեն կկիրառվի գործնականում:

21. 2015թ. խմբագրությամբ Սահմանադության 81-րդ հոդվածը ստեղծել է բավարար սահմանադրահիրավական հիմքեր իրավակիրառողների համար Սահմանադրությամբ ամրագրված հիմնական իրավունքներն ու ազատությունները երաշխավորող դրույթները մեկնաբանելիս Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումները հաշվի առնելու և դրանք որպես քննարկվող իրավահարաբերության կարգավորման առնչությամբ ուղղորդիչ նշանակություն ունեցող չափորոշիչներ ու իրավունքի հետագա զարգացումը կանխորոշող ուղենիշներ ընդունելու համար:

Ատենախոսության դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Ashot Khachatryan, Arpine Arakelyan “Minimum standards for the protection of human rights under the jurisdiction of the European Court”, “Katchar” scientific periodical N. 1, 2022, pages 24-38, հղումը՝ http://katchar.isec.am/myfiles/files/katchar2022_1pdf.pdf

2. Արփինե Առաքելյան «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների ազդեցությունը ՀՀ-ում իրավաստեղծ գործունեության նկատմամբ», «Գիտական Արցախ» պարբերական N 2(13), 2022թ., էջեր 78-91, հղումը՝https://artsakhlib.am/wp-content/plugins/downloadattachments/includes/download.php?id=58866

3. Արփինե Առաքելյան «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռները մարդու իրավունքների պաշտպանության սահմանադրա-իրավական երաշխիքների ամրապնդման համատեքստում», ՀՀ Սահմանադրական դատարանի տեղեկագիր 1 (105), 2022թ., էջեր 124-136, հղումը՝https://www.concourt.am/pdf/uploads/63285c72a7f32_1.105-2022.pdf

4. Արփինե Առաքելյան «ՄԻԵԴ վճիռների շրջանակներում Եվրոպական կոնվենցիայի մեկնաբանման մեթոդաբանությունը», «Արդարադատություն» գիտական հանդես N 1(56), 2022թ., էջեր 32-36, հղումը՝ https://ardaradatutyunjournal.com/wp-content/uploads/2022/07/56-2022-1.pdf

5. Արփինե Առաքելյան «ՄԻԵԴ վճիռների գիտագործնական և գիտատեսական նշանակությունը», «Եվրոպական համալսարան» գիտական հոդվածների ժողովածու N 13 (01), 2022թ., էջեր 160-167, հղումը՝ https://eua.am/wp-content/uploads/2022/07/13-1.pdf

6. Արփինե Առաքելյան «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների իրավաբանական բնույթը», «Հանրային կառավարում» գիտական հանդես 1/2022թ., էջեր 31-42, հղումը՝ https://paara.am/wp-content/uploads/2012/04/HK-2022-1-1.pdf

7. Արփինե Առաքելյան «Մարդու իրավունքների եվրոպական դատարանը միջազգային սահմանադրական արդարադատության համատեքստում», «Հանրային կառավարում» գիտական հանդես 1/2021թ., էջեր 161-174, հղումը՝ https://paara.am/wp-content/uploads/2012/04/HK-2021-1_Syuzi.pdf

АРПИНЕ УНАНОВНА АРАКЕЛЯН

ОЦЕНКА ВЛИЯНИЯ ПОСТАНОВЛЕНИЙ ЕВРОПЕЙСКОГО СУДА ПО ПРАВАМ ЧЕЛОВЕКА (НА ПРИМЕРЕ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ)

РЕЗЮМЕ

Влияние решений Европейского суда, часто выходящее за рамки государства-ответчика по данному делу, распространяется и на правовые системы других государств. В связи с этим необходимо оценивать влияние

постановлений Европейского суда в каждом конкретном случае и объем вызванных им обязательств. В условиях нынешней глобализации права правильная оценка воздействия постановлений Европейского суда важна не только в связи с обеспечением надлежащего исполнения обязательств, взятых на себя ратификацией Конвенции, но и в связи с необходимостью предопределения перспективы развития права через юриспруденцию Европейского суда и подготовить к ней национальные правовые системы.

Исследование, проведенное автором в рамках диссертации, направлено на то, чтобы подвергнуть научному изучению теоретические и практические проблемы постановлений Европейского Суда в силу их уникального правового характера, а также выявить формы и проявления постановлений Европейского Суда. Для достижения поставленной цели в рамках диссертации автор изучил правовой характер постановлений Европейского суда, раскрыл систему и методы оценки воздействия постановлений Европейского суда, выделил формы влияние постановлений и варианты их исполнения, а также оценил влияние постановлений Европейского суда на примере Республики Армения.

Подчеркивая результаты анализа основ конституционного порядка европейских стран и значение "Конвенции как конституционного документа, обеспечивающего европейский общественный строй в судебной практике Европейского Суда", в рамках диссертации изучено влияние постановлений Европейского суда на становление общеевропейского конституционного строя и процессы конституционализации и модернизации европейского права.

Продолжая анализ содержании различных форм воздействия постановлений Европейского Суда и отмечая роль Конституции в укреплении конституционных гарантий защиты прав и основных свобод человека, автор обосновал положение о том, что в рамках современных конституционных норм, подчеркнуто правовое толкование и ценностное значение постановлений Европейского Суда, в том числе и Армении, в контексте гарантирования дополнительных и эффективных мер, обеспечивающих реализацию правовых позиций Европейского Суда в Республике.

Более того, раскрывая содержание типичности и эпохальности, которые в высшей степени свойственны правовым нормам, мысль о том, что постановления Европейского Суда, в том числе, влияют и на формирование системы правовых норм защиты прав человека, исследовано и обосновано в рамках диссертации.

Анализируя обязательность правовых позициях, выраженных в

постановлениях Европейского суда, для третьей страны, не являющейся стороной конкретного дела, изучая понятия эффекта erga omnes и принципа rest interpretata, встречающиеся в теории относительно обязательность правовых позиций международных судов, а также сопоставляя теоретических выводов правовых позиций Европейского Суда и внутригосударственных правовых норм с нормами системы, в рамках диссертации автор также обратился к характеру resterpretata свойственному постановлений Европейского суда и связанной с этим сфере влияния постановлений Европейского суда.

Исходя из того, что постановления Европейского Суда могут иметь разные проявления и формы воздействия в каждом конкретном случае в связи с особенностями правовой системы каждого государства, а также разным пониманием обязательной силы постановления Европейского Суда выдвинут тезис и обоснована мысль о том, что постановления Европейского Суда:

а) могут иметь прямые и косвенные проявления в зависимости от предполагаемого эффекта,

б) по сфере деятельности привлекаемых государственных органов они могут оказывать влияние на деятельность законодательных или правозащитных органов,

в) обусловленно влиянием предполагаемого дополнительного результата нести академические и осведомительные проявления.

ARPINE HUNAN ARAKELYAN

ASSESSMENT OF THE IMPACT OF THE JUDGMENTS OF THE EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS (ON THE EXAMPLE OF THE REPUBLIC OF ARMENIA)

SUMMARY

The impact of the judgments of the European Court of Human Rights often goes beyond the scope of the respondent state in the given case extending to the legal systems of other states. In this connection it becomes necessary to assess the impact of the judgments of the European Court in each case thus identifying the scope of the state's obligations deriving from it.

In the current situation of globalization of law, the proper assessment of the impact of the judgments of the European Court becomes important not only to ensure the proper fulfillment of the obligations undertaken by the ratification of the European Convention, but also for predetermination of the prospects for the development of law through the jurisprudence of the European Court and for preparing the domestic legal systems for it.

The aim of the research carried out within the framework of the dissertation was to study the theoretical-practical challenges of the European Court's judgments' impact given the unique legal nature of the latter and to identify the types and forms of the impact of the judgments of the European Court of Human Rights. To this end the author studied the legal nature of the judgments of the European Court, revealed the European Court's judgments' impact assessment system and methods, identified the types of the impact of the judgments of the European Court of Human Rights as well as the assessment of impact of the judgments of the European Court has been carried out on the example of the Republic of Armenia.

Highlighting the results of the analysis of the fundamentals of the constitutional order in European countries and bearing in mind the significance of the European Convention as a "constitutional instrument ensuring public order", the impact of the judgments of the European Court on the establishment of the pan-European constitutional order and the process of constitutionalization and modernization of the European law was studied within the framework of the dissertation.

Continuing to reveal the content of the various types of impact of the judgments of the European Court and recalling a vital role of the Constitution of Armenia in strengthening constitutional guarantees for the protection of human

rights and fundamental freedoms, the author highlighted the position that the legal-interpretative value of the judgments of the European Court of Human Rights has been increased within the framework of modern constitutional regulations including the context of guaranteeing additional and effective means of implamentation of the European Court's case-law in Armenia.

Moreover, by identifying characteristic features of the international standard for the protection of human rights- typology and descriptive meaning, the author put forward and substantiated the idea that the judgments of the European Court impact on the formation of the system of legal standards for human rights protection.

Analyzing the issue of binding force of legal positions expressed in the judgments of the European Court of Human Rights for a third non-party state in a specific case, studying the concepts of the erga omnes influence and res interpretata principle in theory on the binding force of legal positions of international courts, as well as combining theoretical conclusions with the legal positions of the European Court of Human Rights and domestic regulations the author also highlighted the res interpretata nature of the judgments of the European Court and the scope of the impact the latters have in this connection.

Given the fact that in each specific case the judgments of the European Court of Human Rights may have different types and forms of impact due to the peculiarities of the legal system of each state, as well as given different understandings regarding binding force of the judgments of the European Court of Human Right, the following positions have been highlighted by the author in the framework of the dissertation□

- Depending on the addressee judgments of the European Court of Human Rights may have direct or in direct effect;
- Depending on state authorities involved in the process the judgments of the European Court of Human Rights can have impact on the functions of legislative or law-enforcement authorities;
- Depending on expected additional impact the judgments of the European Court of Human Rights can have academic or informative effect.